№ 16 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8 1896 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8 № 16

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

WIEN 1896

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ., ամսական 1 բուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԹՄԲԱԳՐԱՏԱՆՈՒՄ:

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»: Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համոզմունքը անձեռնմխելի պիտի լինի.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէցօր. Արևելքի պատմութեան ամբիոն. Նամակ Նոր-Նախիջևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Թիւրքիայից.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՐՕՍԱ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կինը Հնդկաստանում.

ՀԱՄՈԶՄՈՒՆՔԸ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՊԻՏԻ ԼԻՆԻ

—

Պրուսական պատգամաւորների ժողովը, քննելով այն խնդիրը թէ ինչ դէպքերում կարելի է արձակել դպրոցական ուսուցչին, ձայների բազմութեամբ որոշեց, որ երբէք չը պէտք է աչքի առաջ ունենալ ուսուցչի համոզմունքները ու դաւանանքը, և երբէք չը պէտք է հալածել նրան այդ պատճառով, այլ կարելի է արձակել ուսուցչին միայն այն դէպքերում, երբ նա, իբրև մանկավարժ, անբաւական է և գործել է զեղծումներ: Ճառախօսները ապացուցանում էին, որ իր պաշտօնավարութիւնից և դպրոցից դուրս՝ ուսուցիչը ազատ քաղաքացի է և կարող է ազատօրէն դաւանել ինչ հայեացքներ և կամենայ, կարող է պատկանել այն ուղղութեան և այն կուսակցութեան, որին համակրում է:

Այդ որոշումը մեծ բաւականութիւն պատճառեց ոչ միայն ուսուցչական դասակարգին, որին նա անմիջապէս վերաբերում էր, այլ և առհասարակ հասարակական բոլոր շրջաններին: Ուսուցչական դասակարգը շատ նշանաւոր տեղ է բռնում դաւառական ինտելիգենցիայի մէջ և նրա բարոյական անկախութիւնը բաց է անում նրա համար արդիւնաւէտ գործունէութեան ասպարէզ: Ճնշված, որ և է կախում ունեցող ուսուցիչը չէ կարող լաւ ազդել իր աշակերտների վրա և չէ կարող վայելել այն հասարակութեան յարգանքը, որտեղ նա գործում է: Թշուառ մարդու տպաւորութիւն է թողնում այն ուսուցիչը, որ ստիպված է շողոքորթել, ստրկական ձևեր գործածել, կեղծել, շոյել սրան և նրան, աշխատել յարմարվել այս կամ այն ազդեցիկ անձնաւորութեան, և ուրեմն թագցնել իր համոզմունքները, իր դաւանանքը:

Գերմանական մամուլը պրուսական ժողովի այդ որոշումը համարում է խրախուսական և ոգևորող՝ ուսուցչական դասակարգի աւելի մեծ և եռանդուն գործունէութեան համար: Ուսուցիչը այսուհետև կարող է իր անհատականութիւնը պահպանել ապահով կերպով, և յարգել տալ իր անձնաւորութիւնը, իբրև հասարակութեան անկախ անդամ:

Դաւանանքի անխախտութիւնը, համոզմունքի անբռնաբարելի լինելը, կարծիքների ազատութիւնը կը դրդեն ուսուցչին աւելի սերտ կապեր հաստատել շրջապատող հասարակութեան հետ, աւելի ազատ կերպով շփվել միւս մանկավարժների և մասնագէտների հետ, իսկ դրանց հետևանքը կը լինի կրթական գործի առաջադիմութիւնը:

Ստրուկ և շողոքորթող ուսուցիչը կը տայ ստրկաբարոյ և թոյլ համոզմունքների տէր սաներ. իսկ անկախ, իր պատիւը և յարգը պահպանող ուսուցիչը՝ անձնուէր և ազնիւ սաներ: Հասարակութիւնը այդ բանը պէտք է լաւ հասկանայ և հէնց իր զաւակների սիրոյ համար՝ պէտք է տայ ուսուցչին բարոյական անկախութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐԷՑՕՐ

V

Կար ժամանակ, որ միսիոնար ասելով հայ ընթերցողները, մանաւանդ նրանք՝ որոնք դժբաղդութիւն ունէին կարդալու «Մեղուի» նման լրագիրներ,—պատկերացնում էին իրանց մի խորամանկ, փոս փորող, խաբեբայ արարած, որ աչքը անկած նայում է՝ թէ որտեղ կայ մի խեղճ, աղքատ, անօգնական արարած, որ ձեռք գցի, խաբի և հաւատը փոխել տայ: Մեր կղերական մամուլը ուրիշ անուն չունէր և չունի միսիոնարի համար, բայց եթէ մարդասիրական բառն, որ յիմար հրճուանքով գործ էին ածում ամեն մի քայլափոխում...

Տարիների ընթացքում այդ անմիտ հայեացքը ջախջախվեց, և մեզ թվում է, որ մանաւանդ այժմ, հայ ընթերցողը մի առանձին պատկառանքով է կանգ առնում միսիոնարների վրա, որոնք, ինչպէս ուրիշ շատ երկիրներում, այնպէս էլ Թիւրքաց Հայաստանում հանդէս են գալիս իբրև սովատանջ, թշուառ ժողովրդի համարեա միակ սփոփիչը, օգնողը և խնամողը...

Եթէ սովորական ժամանակ մի որ և է միսիոնարուհի, կամ մի խումբ միսիոնարներ յափշտակվում են լաւ կրօնական պրօպագանդայի գործով, ընդհակառակն, հասարակական, ընդհանուր աղէտի ժամանակ այդ մարդիկ, որոնք նուիրել են իրանց մարդասիրութեան գործին՝ իրանց համար օտար, հեռու, անծանօթ երկիրներում, դառնում են հոգատար քոյրեր, խնամող ձեռքեր, որ իդեալական անձնուիրութեամբ, գիշեր ցերեկ, տքնում են օգնութեան ձեռք կառկառել քաղցածներին և կարօտեալներին:

Եւ այս բոլէիս, ամբողջ Թիւրքաց Հայաստանում, որտեղ հաղարաւոր ընտանիքներ կարօտ են հացի, շորի, մի տաք անկիւնի, ոչ մի դատակարգ, ոչ մի հիմնարկութիւն չէ ցոյց տալիս այն օգնութիւնը և քրիստոնէական վերաբերմունքը, ինչ որ ցոյց են տալիս միսիոնարները, թէ տղամարդ և թէ կին, որոնք Աղանտեան ավկիանոսի միւս ափից տեղափոխվելով թշուառութեան երկիրը, հերոսական ջանքեր են գործ դնում, ժողովրդին օգնելու համար:

Միայն կուլտուրական բարձր աստիճանի վրա կանգնած հասարակութիւնը կարող է տալ այնպիսի տիպեր, ինչպէս են այժմ Հայաստանում գործող մի քանի միսիոնարներ, կամ ինչպէս է մի օրիորդ Ֆիմպօլ, որ մարդասիրական անագին գործեր է կատարում Վանի մէջ, մոռացած իրանց անձը, իրանց հանգստութիւնը, իրանց անձնական ապահովութիւնը...

Խ. Մալումեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԻՆԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

—

Անգլիական տիրապետութիւնը մինչև այժմ բազմաթիւ վերանորոգութիւններ է մտցրել Բուդդայի հայրենիքում: Եւրոպական քաղաքակրթութիւնը, սակայն, դեռ չէ կարողանում մրցել դարաւոր այն հասկացողութիւնների դէմ, որոնք ամենայն ջերմեռանդութեամբ պահպանվում են ժողովրդի մէջ՝ կռապաշտական կրօնի հետ: Եւ այդ դրութեան պատկերը, կարծում ենք, ոչ մի երևոյթ այնպիսի պարզ գոյներով չէ նկարում, ինչպէս այն դժոխքը, որի մէջ գտնվում է կինը Հնդկաստանում:

Մեզ յայտնի է, որ կինը արևելքում զրկված է մարդկային իրաւունքներից, ներկայացնում է ստրկութեան այն անարգ ձևը, որ նուիրագործված է ազգերի կրօնական հասկացողութիւններով: Բայց կարելի է համարձակ ասել, որ նոյն իսկ արևելեան կիսավայրենի ժողովրդների մէջ կնոջ դրութիւնը այնքան սոսկալի չէ, որքան Հնդկաստանում, այն երկրում, ուր լայն հոսանքներով մուտք է գործում եւրոպական քաղաքակրթութիւնը:

Այդ սոսկալի դրութիւնը նկարագրել են նոյն իսկ հնդկացի կանայք: Այդպիսի մի նկարագրութիւն լոյս է տեսել Նորերս *): Մեր ընթերցողների համար առաջ ենք բերում մի քանի տեղեկութիւններ, որոնք բաւականաչափ ցոյց են տալիս, թէ մարդկութիւնը ինչ անարգ ստրկութեան է ենթարկել իր կէսը, այն կէսը, որ բոլոր աշխարհների բանաստեղծների լեզուով կոչվում է գեղեցիկ:

*) «Русскія Вѣдомости».

Ապացուցված է, որ ստրկութիւնը միակերպ ազդեցութիւն է անում թէ տիրոջ և թէ ստրուկի վրա: Հնդկաստանում ստրկութիւնը, կատարեալ, սոսկալի ստրկութիւնը գոյութիւն ունի, բայց տարածված է միայն մարդկային ցեղի մի կէսի վրա, կանանց վրա: Հնդիկ կնոջ կեանքը այնքան սոսկալի է, որ ամեն անգամ, երբ կարդում էք այդ կեանքի նկարագիրը, չէք հաւատում թէ ճիշդ է ձեր կարդացածը: Եւ միայն կատարելապէս հաւատ ներշնչում է այն կնոջ պատմութիւնը, որ ինքը անձամբ տարել է այդ սոսկալի դրութիւնը:

Բարձր կաստաների կանանց համար հասարակական հասկացողութիւնները հիմնել են տան մէջ բանտեր, որոնք կոչվում են զէնանա: Դրանց չէ հասել քաղաքակրթութիւնը: Դրանք հարեմների պէս են, բայց այն կարգերը, որոնք տիրում են այնտեղ, դեռ ոչ մի տեսակ հարեմ չէ ընդունած:

Հարաւային նահանգներում կանայք համեմատաբար ազատ են: Իսկ հիւսիսային նահանգներում ստրկութիւնը սոսկալի է: Կարդը պահանջում է կնոջը փակված պահել և այդ սովորութիւնը այնքան արմատացած է, որ մինչև անգամ տեղացի քրիստոնեաները, բարձր պարիսպներով են շրջապատում իրանց կանանց բնակարանները և կանայք ոչ մի դէպքում իրաւունք չունեն դուրս գալ այդ շրջապատից: Ծովափնեայ Մադրաս քաղաքում կան հարուստ կանայք, որոնք երբէք չեն տեսել ծովը: Փակվածների դրութիւնը վերին աստիճանի սոսկալի է. և զարմանալի չէ, որ 15, 16 տարեկան հասակում նրանք նման են 35—45 տարեկան կանանց:

Սակայն հնդիկ կինը ընութիւնից չէ զրկված ոչ խելքի, ոչ բարութեան կողմից: Նրա սէրը դէպի իր երեխաները հանում է անձնազոհութեան: Կանացի տգիտութիւնը զարհուրելի է. և այդ պատճառով նրանք սարսափելի նախապաշարված են: Ակամայ անգործութիւնը ծնում է չատախօսութիւն և մտաղարծութիւն: Նրանց ձգտումը դէպի զարդարանքները գերազանցում է ամեն մի չափ: Հաշված է, որ Հնդկաստանում գեղեցիկ սեռի զարդարանքները կազմում են 4 միլիարդ բուբլու մի մեռած գումար: Այս ամենից յետոյ հասկանալի է, որ Հնդկաստանում առաջադիմութեան գլխաւոր խոչընդոտներից մէկը կինն է, իսկ կանանց դասը այդ երկրում աւելի բազմաթիւ է, քան Ֆրանսիայի, Անգլիայի, Բէլգիայի, Հոլանդիայի և Իտալիայի ընդհանուր ազգաբնակութիւնը՝ միասին վերցրած:

Երեխաների ամուսնացումը նոյնպէս շատ նշանաւոր է այդ ընդհանուր տգիտութեան: 1881 թվին հաշվում էին 670,000 տղայ երեխաներ, որոնք ամուսնացրած էին տասն տարեկանից առաջ. 1,932,000 աղջիկներ, որոնք մարդու էին տված մինչև 16 տարեկան հասակը. 1,800,000 տղայ երեխաներ, որոնք ամուսնացած էին տասից մինչև տասն և չորս տարեկան հասակը. 4,400,000 աղջիկներ, որոնք մարդու են տված տասից մինչև տասն և չորս տարեկան հասակը:—Մի փոքրիկ իշխանութեան մէջ, որի ազգաբնակութիւնը միայն երկու միլիոն է, մի քանի տարի սրանից առաջ կային 132 տղաներ և 558 աղջիկներ, որոնք ամուսնացրած էին մինչև մի տարեկան հասակը:

Այդքան վաղաժամանակ ամուսնութիւնները երկու պատճառ ունեն: Առաջինն այն է, որ հընդկիների համար ամուսնութիւնը աստուածութեան պահանջ է, մէկը այն տասներկու սուրբ վարմունքներից, որոնց միջոցով մարդը կարող է քաւել իր մեղքերը: Երկրորդ պատճառը քուրմերի վարդապետութիւնն է, որ ուսուցանում է թէ ուշ մարդու տուած կնոջ հայրն ու մայրը պիտի ընկնեն դժոխքը, իսկ այդպիսի կնոջ սերունդները մինչև երրորդ պորտը կը վերակենդանանան փոշու և ցեխի մէջ, միջատների կերպարանքով: Ուրեմն աւելի հաստատուն հասակում աղջիկ մարդու տալը—մեղք է: Կան քուրմեր, որոնք պահանջում են, որ աղջիկները նշանադրվեն այն ժամանակ, երբ դեռ ման դալ չը գիտեն: Հուջերաթում մայրերը ամուսնացնում են նոյն իսկ դեռ չը ծնված երեխաներին: Այդ մի տեսակ զուարճութիւն է նրանց համար. եթէ ծնվող երեխաները տարբեր սեռի են, այն ժամանակ նշանադրութիւնը վաւերական է. իսկ եթէ չէ՝ այն ժամանակ մայրերը բաւականանում են և նրանով, որ իրանց կեանքի մէջ մի փոքրիկ զուարճութիւն ունեցան:

Հռչակաւոր Բէչուբ-Շանտէր-Սէն հրատարակել է ամենազզուելի սովորութիւնների մի անագին շարք, որոնք ծագում են երեխաների ամուսնութիւններից: Նա միւս հնդիկ վերանորոգիչների հետ ապացուցանում է, որ ժողովուրդը արագ քայլերով գնում է դէպի այլասերումն և անհրաժեշտ է ձեռք առնել ամենաեռանդուն միջոցներ այդ չարիքի դէմ: Նրա կուսակցութիւնը պահանջում է վերացնել ամուսնութիւնը երեխայական հասակում: Բայց այդ բարենորոգման հակառակորդները հիմնվում են սրբազան գրուածքների վրա:

Եթէ այդքան ողբալի է աղջիկների և ամուսնացած կանանց վիճակը, ինչ ասել այրի կանանց դրութեան մասին: 1893 թ. կատարված ժողովրդագրութիւնը Հնդկական թերակղզու աղգաբնակութեան թիւը որոշում է 287,400,400. դրանից 23,000,000 այրի կանայք, որոնցից 64,000 ինն տարվայ հասակին չը հասած և 13,000 չորս տարեկանից էլ ջահել: Հարուստ հնդկացին կարող է իրանից յետոյ մի քանի այրիներ թողել: Բոլոր այն թշուառ աղջիկները, որոնք իրանց կեղծ ամուսիններից աւել են ապրում, համարվում են այրիներ:

Ահա թէ ինչպիսի գոյներով են նկարում այրի կնոջ կեանքը իրանք, տեղացիները: Մեր առաջն

ԱՐԵՒԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԲԻՕՆ

—

Ներկայ ուսումնական տարվայ սկզբին Պետերբուրգի համալսարանի պատմական-լեզուագիտական ֆակուլտէտին կից հաստատվեց մի նոր ամբիոն,—արևելքի պատմութեան ամբիոնը: Այդ առարկայի ուսումը այսուհետև պարտադիր է ուսանողների համար:

Յունվարի 27-ին, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, այդ առարկայի պրոֆէսոր Տուրաեվ կարդաց իր առաջին դասախօսութիւնը՝ բազմաթիւ ունկնդիրների ներկայութեամբ: Իր դասախօսութեան մէջ Տուրաեվ այն միտքը յայտնեց, թէ արևելքի պատմութեան ներկայ վիճակում՝ անտեղի և անհնարին պէտք է համարվի այն կարծիքը, որ իբր թէ արևելեան ազգերը հանդիսացել են միշտ մեռած, անշարժ և առաջադիմութեան անընդունակ մի տարր: Պատմութիւնը ցոյց է տալիս, որ արևելքը ընդհանրապէս ունեցել է զարգացման այն շրջանը, որով անցել է և արևմուտքը, որ արևելքի առաջադէմ երկիրների, օրինակ, Բաբիլոնի ազդեցութիւնը ամբողջ դարեր է տեւել և մինչև այժմ էլ երևում է արևելքի ազգերի վրա, ճիշդ այնպէս, ինչպէս արևմուտքի ազգերը մինչև այսօր էլ գտնվում են յունա-հռոմէական կուլտուրայի ազդեցութեան տակ: Այդ պատճառով արևելքի ուսումնասիրութեան պատմութիւնը կարող է մեծ լոյս սփռել արևելքի ազգերի ժամանակակից վիճակի վրա:

Բացի դրանից, պատմութիւնը ցոյց է տալիս, որ արևելքը միշտ կրաւորական կերպով չէ ըմբռնել և իրացրել արևմտեան քաղաքակրթութիւնը, այլ նոյն չափով նա ինքը կանք է տուել արևմտեան քաղաքակրթութեան և զարգացրել նրան, և արևմուտքի հոգևոր անկման րոպէներում՝ պահպանել և ոգևորել է մարող կանքը: Բաւական է յիշել, որ փիլիսոփայութիւնը ծնվել է արևելքում, որ յունա-հռոմէական բազմաստուածութիւնը երկար ժամանակ կերակրվել է արևելքի կրօնական հայեցուածքներով, որոնք վերջ ի վերջոյ հող պատրաստեցին քրիստոնէութեան գաղափարը որոնելու և ըմբռնելու համար, մի գաղափար, որը նոյնպէս ծնվեց և աճեց արևելքում: Արևելեան և յունա-հռոմէական կուլտուրաների միացումից ստեղծվեց մի նոր կուլտուրա, այն է բիւզանդականը, որը այնքան նշանաւոր դեր խաղաց արևելեան քրիստոնեայ ազգերի կեանքի մէջ: Իբրև հետևանք այդ ազդեցութեան, պէտք է համարել կրօնական ոգու այն աղդակցութիւնը, որ գոյութիւն ունի բոլոր արևելեան քրիստոնեայ ազգերի մէջ, հաշուելով դրանց թւում և Ռուսաստանը: Այդ տեսակէտից՝ արևելքի պատմութեան ուսումնասիրութիւնը չատ հետաքրքրական պէտք է լինի ռուսների համար, որովհետև ուսումնասիրելով արևելքի անցեալ և ներկայ պատմութիւնը, ռուսները դրանով լուսաբանած կը լինեն իրանց սեփական էութիւնը:

Շատ լաւ կը լինէր, որ կովկասեցի ուսանողները օգուտ քաղէին նոր հաստատված ամբիոնից և լուրջ կերպով ուսումնասիրէին արևելքի պատմութիւնը, որի մի գլխաւոր մասը պէտք է կազմի, անշուշտ, Հայաստանի և Վրաստանի պատմութիւնը: Կովկասի անցեալը այնքան քիչ է ուսումնասիրված մինչև այժմ, որ այդ ասպարէզում գործող այժերը կարող են մեծ ծառայութիւն մատուցանել մեր երկրի պատմական անցեալի ուսումնասիրութեան:

Ա.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Յունվարի 29-ին

Վաղը, յունվարի 30-ին, կայանալու է մեր նորակազմ թատերասէրների խմբի ներկայացումը. խաղալու են երկրորդ անգամ «Մեծապատիւ Մուրացկաններ»: Իր ժամանակին մենք առիթ կունենանք խօսելու այդ մի շարք հայերէն ներկայացումների մասին. առ այժմ հարկաւոր ենք համարում չեշտել մի կարևոր կէտի վրա:

Մինչև այժմ Նախիջևանի հասարակութիւնը զրկված էր կանոնաւոր հայկական ներկայացումներից և եթէ պատահում էր, որ թատերասէրների խումբը ներկայացնում էր մի որ և է պիէս՝ խաղում էր միայն Նախիջևանի բարբառով, պատճառաբանելով, որ հասարակութիւնը չէ հասկանում գրականական լեզուով խաղացած պիէսները: Պատճառներից մէկն էլ այն էր, որ թատերասէրների խումբը մինչև վերջին ժամանակներս հայերէն խաղացող անդամներ չունէր: Վերջին ժամանակներս թատերասէրների խումբը մտան տասնի չափ երիտասարդ անդամներ, որոնք համարեա ամենքն էլ տեղական դպրանոցը աւարտող աշակերտներ են. դրանց նպատակն է՝ հայերէն ներկայացումներ տալ, հասարակութեանը բեմից գրականական բարբառի հետ ծանօթացնելու նպատակով: Գովելի ցանկութիւն: Շատ ցանկալի էր, որ նոր անդամները որոշ ծրագրով գործէին: Մեր կարծիքով, մեր հասարակութեան հարկաւոր է տալ ժամանակակից տիպեր պարունակող պիէսներ, որոնց մէջ հասարակութիւնը տեսնէր իր պատկերը, իր բոլոր բարոյական կողմերով, սխալ և հնացած հասկացողութիւններով: Անկասկած, պակասութիւն կը զգացվի մեր թատրոնական գրականութեան մէջ այդպիսի պիէսների կողմից. այդ դէպքում կարելի է թարգմանել ռուսաց լեզուով գրված պիէսներ, մանաւանդ որ խումբը այժմ հայերէն խմացող անդամների պակասութիւն չունի:

Ի դէպ է նկատել, որ նոր խումբը լաւ կանի, եթէ աշխատի մուտքի գները, որքան կարելի է, պակասեցնել, որպէս զի հասարակութեան չքաւոր մասն էլ միջոց ունենայ յաճախել ներկայացումները: Մենք յոյս ունենք, որ թատերասէրների խումբը զուարճութիւնը կը միացնի օգտակարի հետ:

Ց. Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լսում ենք, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, երկար քննութիւնից յետոյ, դպրոցի նոր շինութեան համար ընտրեց Զիթախեանի հողը: Այդ հողը բաւականաչափ ընդարձակ է, աւելի քան 3000 քառակուսի սաժէն, և յարմար է թէ դպրոցական շինութեան և թէ այլ նպատակների համար, որոնք կարող են օգտաւէտ լինել դպրոցական տեսակէտից, ինչպէս են օրինակ արհեստանոցներ, բաղանիք, պարտէզ և այլն: Զիթախեանի հողը գտնվում է Կումկիա քաղաքամասում, Նաբերեժնայա փողոցի վրա, կուրի ափին: Բժիշկների տուած զեկուցումից երևում է, որ այդ տեղը առողջապահական տեսակէտից կատարելապէս բաւարար է:

—

Այս օրերս Քութայիսում վախճանված Գաբրիէլ եպիսկոպոսը, ինչպէս հաղորդում է «Իվերիա» լրագիրը, մի կտակ է թողել, որով իր ամբողջ կարողութիւնը՝ 32,000 ռուբլի՝ յատկացրել է բարեգործական նպատակների, իսկ իր ընդարձակ գրադարանը նուիրել է Քութայիսի հոգևոր ուսումնարանին: Հանգուցեալը, որը մի և նոյն ժամանակ և վրաց մէջ գրողի համբաւ էր վայելում, կտակել է այդ ուսումնարանին իր գրուածների հրատարակութեան իրաւունքը, իսկ 32,000 ռուբլին հետևեալ կերպով է կարգադրել. 1) Բախգիլդի դպրոցին—12,000 ռուբլի, 2) աղքատ հոգևորականներին—2,000 ռ. 3) Քութայիսի բարեգործական ընկերութեան—1,500 ռ. 4) Քութայիսի հոգևոր դպրոցի չքաւոր աշակերտներին—3,000 ռ. 5) Քութայիսի հոգևոր սեմինարիայի աղքատ աշակերտներին—3,000 ռ. 6) Իմէրէթիայի թեմական աղջկերանց դպրոցին—5,000 ռ. 7) Քութայիսի իգական դպրոցին—2,000 ռ. 8) Գէլաթի վանքին—1000 ռ. և 9) իր անտիպ գրուածները հրատարակելու համար—2,500 ռ.:

Հայ հոգևորականներ, օրինակ առէք:

—

Ինչպէս լսել են տեղական լրագիրները, Թիֆլիսի փոխ-նահանգապետ կոմս Տիզենհաուզէն նշանակվում է Երևանի նահանգապետ: Կոմս Տիզենհաուզէն արդէն լաւ ծանօթ է երևանցիներին. մի քանի տարի առաջ նա վարել է Երևանի փոխ-նահանգապետի պաշտօնը, և լաւ անուն է թողել Երևանի հասարակութեան մէջ:

—

Ներկայ փետրվար ամսին զինական նպատակով Պարսկաստան պէտք է ուղևորվի Ն. Զարուդնի, որ արդէն կատարել է զանազան հետազօտութիւններ Անդրկասպեան երկրում, Օրէնբուրգի նահանգում և Խորասանում: Պարսկաստանում Զարուդնի գլխաւորապէս պէտք է ուսումնասիրի թռչունների և նրանց կենցաղավարութիւնը:

—

Մեզ հաղորդում են, որ օրիորդ Մարգարիտ Մէլիք-Բէգլարեան, որը անցեալ տարի աւարտեց բժշկական կուրսը արտասահմանում, մի քանի ժամանակ առաջ վերադառնալով Թիֆլիս, խընդիրք է ուղարկել ժողովրդական լուսաւորութեան մինիստրին, խնդրելով թոյլ տալ իրան բժշկական քննութիւն բռնել Ռուսաստանի համալսարաններից մէկում, ի նկատի ունենալով, որ նա իր միջնակարգ ուսումը աւարտել է Թիֆլիսի առաջին իգական գիմնազիայում:

—

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ իգական կիրակնօրեայ դպրոցի ղեկավարները մտադիր են բանալ և արական կիրակնօրեայ դպրոց:

—

Կանանց ինստիտուտ հիմնելու համար Մոսկվայի աղնուականութիւնը ունի մի միլիոն ռուբլի գումար: Այդ գումարի սկիզբը դրված է սրանից տասն տարի առաջ, 1885 թ-ին, երբ եղան միանուագ նուէրներ և սահմանվեց տուրք կալուածքների վրա: Աղնուականութիւնը որոշեց դարձեալ երեք տարի շարունակել տուրք տալը, հաշուելով եկամուտի 1/4 տոկոսը:

դատապարտված է վեցամսեայ բանտարկութեան այն պատճառով, որ չէր ուզեցել բնակվել իր անցյալ ամուսնու հետ: Ահա ինչ է գրում նա. «Ես դատապարտված եմ ոչ միայն լինել այդ մարդու հետ, այլ և վճարել դատավարութեան ծախսերը: Երբ դուք կը ստանաք այս նամակը, ես նստած կը լինեմ բանտում այն պատճառով, որ մերժել եմ կատարել ուրիշի վերցրած պարտաւորութիւնը: Կանանց համար արդարութիւն չը կայ ոչ հնդկական և ոչ էլ անգլիական տիրապետութեան ժամանակ»:

Անկասկած, ամենից գլխաւորն է—ուսում ստանալու հնարաւորութիւն տալ կանանց: Արդէն հիմնված են դպրոցներ. անգլիական կառավարութիւնը ամեն միջոցներ ձեռք է առնում տեղացիներին դրաւել դէպի ուսումն: Գոյութիւն ունեն նոյն իսկ մի քանի բարձրագոյն դպրոցներ, այնպէս որ 1883 թ. Կալկուտայի համալսարանում ուսում աւարտեցին բենգալացի առաջին ուսանողուհիները: Բայց այդ բոլոր միջոցները, համեմատելով Հնդկաստանի կանանց թվի հետ, հաւասար են ծովի մէջ մի կաթիլ ջրին:—Վաղուց հասկացվել է, որ պէտք է թափանցել զէնանների ներսը և այնտեղ ուսուցանել կանանց: Շատ անգլիացի և ամերիկացի կանայք նուիրվել են այդ գործին: Բենգալիայում այդ շատ դժուարութիւն չունի: Բայց մուսուլման հնդիկները, որոնց թիւը հասնում է 30 միլիոնի, բոլորովին չեն ուզում որ և է լաւութիւն մացնել իրանց ընտանեկան կեցութեան մէջ: Չը նայած այդ արգելքին էլ, հետզհետէ վարժուհիները մուտք են գործում և մուսուլմանների կանանոցները:

Դեռ անագին աշխատանք է հարկաւոր, որ լոյսի ճառագայթներ մտնեն հնդկացի կնոջ դարհուրելի արգելարանները և աղատութիւն տան չարչարվող խեղճերին:

Բ.

է երեքամեայ այրի մի աղջիկ բրամինների դասակարգից: Մանուկը չէ հասկանում իր թշուառութիւնը. և ախր ինչպէս կարող է երեք տարեկան աղջիկը այրի լինել: Բայց ուր որ երևում է նրա ածիլած գլուխը, ամենքը նրան յանդիմանութիւններ են կարդում և ամեն տեղից վռնդում են նրան: Նա իրաւունք ունի կրել միայն կոպիտ սպիտակ զգեստ: Եթէ մի ոտն օր, երեխաների մի ուրախ և գեղեցիկ հագնված խմբին պատահաբար մօտենում է փոքրիկ այրին, ամենքը իսկոյն սարսափահար դառած՝ մի կողմ են քաշվում: «Այրի, վատ նշան: Գնա, թագվիր ամօթից, ուրիշների վրա ցաւ մի բերիր, դու, երեխ, շատ մեղքեր ես գործել անցեալ կեանքում, որ այրիացել ես»: Ահա ինչ են աղաղակում դէպի նրան ամեն կողմից. և, չը նայելով փոքրիկի լացին ու աղաչանքներին, նրան հեռու են քշում: Երեխան չէ հասկանում թէ ինչու են իրան հալածում, ինչու մինչև անգամ իր մայրը հայհոյանք և անէծքներ է թափում իր վրա: Երբեմն երբեմն տուն է գալիս քուրմը, ածիլում է նրա գլուխը, հրամայում է իւրաքանչիւր երկուշաբթի պահել 72 ժամ խիստ պաս և ամեն անգամ կարդում է երկար մեղադրական ճառեր այն մեղքերի համար, որ փոքրիկը գործել է իր անցած կեանքում: Խեղճը հետզհետէ սկսում է հասկանալ, որ ինքը ամուսնացած էր, հասկանալ, որ դատապարտված է յաւիտենական տանջանքի, եթէ աւելի լաւ չը համարէ ինքնասպանութեամբ ազատվել «վշտի անեղը և անտակ այդ ովկիանոսից», ինչպէս ասում են Հնդկաստանում: Բոլոր պատուաւոր անների դռները փակված են այրիների առաջ և նրանց մնում է ընկնել, անբարոյականանալ: Նրանք բոլորովին անպաշտպան են: Կարելի է նրանց կողոպտել, խարէութեամբ խլել նրանց կայքը և բոլորովին անպատիժ մնալ (օրէնքով այրիները ժառանգում են իրանց ամուսինների կայքը, «որպէս զի կարողանան ամուսնու յիշատակին կատարվող աղօթքների և զոհաբերութիւնների համար վճարել»): Այդ քիչ է, այրիներին ամենակոպիտ, ամենասոսկալի վիրաւորանքներ հասցնելը ոչ միայն չէ համարվում խղճմտանքի դէմ մի բան, այլ, ընդհակառակն, այրիին վիրաւորելը նշանակում է աջակցել երկնքի արդարադատ պատժին: Նոյն իսկ ուրիշների գործած յանցանքները բարդում են այրիների վրա և ոստիկանութիւնն էլ այնքան նախապաշարված է, որ սիրով թոյլ է տալիս մեղադրել այրիներին:

Պէնջաբից մի տիկին գրում է. «Այրիները ամեն տեղ են շատ դժբաղդ, բայց մեզ մօտ նրանց դրութիւնը աւելի ծանր է, քան որ և է տեղ: Լաւ է մեռնել, քան այրիանալ»: Ոչ մի կին, մինչև անգամ ազգական, չի մօտենայ այրիին. միայն սարիրիչների կանայք են ներս վազում, հէնց որ մեռնում է տղամարդը, և իսկոյն պոկում են այրիներից բոլոր զարդերը: Թաղման ժամանակ այրին պիտի գնայ բոլոր ազգականներից յետոյ, որպէս զի «նրա անմաքուր ստուերը չը պղծէ մէկին»: Նրան չրջապատում են սարիրիչների կանայք և կանչում են ամեն մի հանդիպողին. «հեռացէք, այս անիծածի ճանապարհից հեռացէք»:

Մադրասի ամենախելօք և կրթված բրամինների մէկը, որ յայտնի է իր չափաւոր համոզմունքներով, հրապարակով հաստատում էր, որ անգլիացիները, արգելելով այրի կանանց այրելը, շատ վատացրել են նրանց դրութիւնը: Այրիներին այրելը գոյութիւն ունէր մինչև 1829 թ. և տեղացիներից շատերը հաւատացնում են, որ եթէ անգլիացիները հեռանան, իսկոյն այդ սովորութիւնը կը վերանորոգվի, որովհետև այն կնոջ, որ խարոյկ է բարձրանում իր մեռած ամուսնու հետ, կրօնը խոստանում է ընակութիւն երկնքում «այնքան հաղար տարիներ, որքան մազ կայ գլխի վրա»: Եւ, ընդհակառակն, այն կինը, որ չէ գնում իր ամուսնու ետևից կրակի մէջ, դատապարտված է նորից ծնվել կնոջ կերպարանքով:

Ի հարկէ, կնոջ այդ դրութիւնը չէր կարող չը գրաւել եւրօպացիների ուշադրութիւնը: Ոչ միայն միսիոնարներն են աշխատում այդ չարիքի դէմ, բայց վերջին ժամանակները նոյն իսկ տեղացիների մէջ լսվում են ձայներ կնոջ անտանելի դրութիւնը լաւացնելու մասին: Բայց այդ ցանկութիւնը իրագործել շատ դժուար է, որովհետև տեղացիներից վարժուհիներ չը կան, իսկ ոչ մի բրամին չի համաձայնվի ուղարկել իր աղջիկը դպրոց, վախենալով թէ նա այնտեղ կարող է նստել ստոր դասակարգի աղջիկների հետ միասին կամ, որ աւելի վատն է, ուտել նրանց հետ միասին: Հնդիկներ կան, որոնք Մանուի արգելքին հակառակ գնալով, աշխատում են, որ այրիները կարողանան նորից մարդու գնալ: Թէև այդպիսի ամուսնութիւններ անգլիական կառավարութիւնը պաշտօնապէս թոյլատրել է 1856 թ-ից, բայց հասարակութիւնը այնքան նախապաշարված է, որ իրապէս այդ ամուսնութիւնները անհնարին են: 1875 թ. մի հարուստ վաճառական ամուսնացաւ իր կաստային պատկանող մի այրիի հետ և դրա համար իսկոյն վռնդվեց այդ կաստայից. նրան արգելեցին մտնել տաճարները, այդ բաւական չէ, մնանկացրին և հարկադրեցին հեռանալ հայրենի քաղաքից, որովհետև ոչ ոք չէր համաձայնվում վարձով տուն տալ նրան:

Անգլիական տիրապետութիւնն էլ մի բանով վատացրել է կնոջ վիճակը: Ամուսնութիւնը, որ կատարվում է նոյն իսկ մանկական հասակում, անլուծելի է. և այն աղջիկը, որ չէ ուզում իր ամուսնու մօտ գնալ, բանտարկվում է: Մի կին

«Петербургскія Вѣдомости» լրագրի ասելով՝ այս տարվայ ամառը, Նիժնի-Նովգորոդում տեղի կունենայ սլաւոնական ժողով, որին կը մասնակցեն զանազան երկիրներից եկած սլաւոններ։

—

ՌՈՒԹԱՑԻՍԻՑ գրում են «Тифл. Листокъ» լրագրին. «Ռութայիսին մեծ աղէտ է պատճառել ձիւրին. Մօտ երեք արշին բարձրութեամբ ձիւն է եկել. բազմաթիւ տներ քանդված են, և շատ տանիքներ ծանրութիւնից կործանված։ Փողոցներով անհնարին է երթևեկել։ Ձիւնը սրբելու և քերելու համար չը կան բանտորներ. եղածներն էլ օրեկան 4—5 ռուբլի վարձ են պահանջում։ Ինչպէս ասում են, դաշտերում շատ մարդիկ են ձիւնի տակ մնացել և մեռել։ Կոտորվել են մեծ քանակութեամբ կովեր, ձիեր և ոչխարներ։»

—

ԴԵՐԲԵՆԴԻՑ մեզ գրում են. «Յունվարի 25-ին վախճանվեց Դերբենդի հայոց դպրոցի վարժուհի տիկին Աշխէն Քոչարեանց։ Նա գրաւել էր թէ հասարակութեան համակրանքը, և թէ աշակերտուհիների սէրը։ Հանգուցեալը ծառայել է երեք տարի հայոց դպրոցներում—սկզբում Դիլիջանում և ապա Դերբենդում։»

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Այստեղ կազմակերպվեց մի ընկերութիւն, որի նպատակն է շատ էժան գնով մատակարարել գիւղական հասարակութեան մանուֆակտուրային և ուրիշ ապրանքներ։ Ընկերութեան պայմանագիրը, որը գրած է տասն տարով՝ նոտարական կարգով, տալիս է անդամներին լայն իրաւունքներ՝ իրանց գործունէութեան համար։ Ընկերութիւնը ունի իր վարչութիւնը, նախագահով և քարտուղարով, որոնք պէտք է ղեկավարեն ընկերութեան գործերը։ Այդ ընկերութեան դրամագլուխը, գոյացած անդամակցական բաժիններից, առ այժմ հասնում է կանխիկ փողով և ապրանքներով 20,000 ր.։ Ընկերութիւնը իր գործունէութիւնը սկսում է ներկայ փետրվարի 15-ից, բացանելով Ներքին-Մաղխասում առևտրական տուն, որտեղ կը ծախվեն մանուֆակտուրային և ուրիշ ամեն տեսակ ապրանքներ, շատ էժան գնով։ Ընկերութիւնը չուտով բաց կանի և մի քանի բաժանմունքներ՝ Սղնախի գաւառում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մեզ հաղորդում են Կ. Պոլսից, յունվարի 26-ից, որ վերջին շաբաթը պատրիարքը 20,000 ռուբլի ուղարկեց Հայաստանի կարօտեալների համար, միսիոնարների ձեռքով։

—

Մեզ գրում են Գահիրէից, որ այնտեղ հանգանակութիւն է սկսված՝ յօգուտ Թիւրքաց Հայաստանի սովեալների, և արդէն հաւաքված է մօտ 10,000 ռուբլի։

—

Սոֆիայից հաղորդում են «Temps» լրագրին. «Արևելեան դպրոցների ֆրանսիական ընկերութիւնը հանգանակութիւն է բաց արել վերջին անկարգութիւնների ժամանակ վնասված հայերի օգտին։ Նա հաւաքել է արդէն 25,000 ֆրանկ, և ուղարկել է այդ դումարը Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանին և Աղարեան պատրիարքին»։

—

Կ. Պոլսից հաղորդում են, որ Զէյթունի համար հետևեալ պայմաններն են առաջարկվել։ Հայերի ձեռքից, ինչպէս և մահմեդականներից պէտք է խլվեն զէնքերը, միայն պէտք է թողնվեն մասնաւոր անձանց զէնքերը։ Բոլոր տեղացիներին ընդհանուր ներում պէտք է շնորհվի և միայն մասնաւոր անձանց դանգատները պէտք է նկատողութեան առնվեն։ Ոչ-տեղացի մի քանի ազիտատորներ պէտք է արտաքսվեն երկրից։ Սուլթանը կը քննի հարկերը և տուրքերը չը պահանջելու հարցը։ Աւերված գօրանոցները չը պէտք է վերաշինվեն։ Մացնվելի բէֆօրմների համաձայն՝ գայմագամը պէտք է նշանակվի քրիստոնեաներից։ Դեսպանները պէտք է առաջարկեն Բ. Դրան՝ յայտարարել, որ անձնաւորութեան և գոյքի ապահովութիւնը կատարելապէս երաշխաւորված է։ Հիւպատոսները՝ տեղական իշխանութեան հետ միասին պէտք է հոգ տանեն ապստամբներին ուղարկելու իրանց հայրենիքը, և պէտք է տեղն ու տեղն հսկեն այդ բանի վրա։

—

Սօլսբիւրիի ազգական Բալֆուր, որ համայնքների ժողովի նախագահ է, Բրիստոլում արտասանած իր ճառի մէջ երեք գլխաւոր կէտ շօշափեց։ Առաջին՝ Հայաստանում կատարված դժբաղդութիւնների պատասխանատուութիւնը որ և է դէպքում չէ կարելի բարդել Անգլիայի վրա. այդ հանգամանքը կարելի է ապացուցանել տեղի ունեցած դիպլօմատիական գրագրութեամբ։ Թիւրքիան, անկասկած, մօտենում է իր վերջնական անկման, քանի որ նա հրաժարվեց Անգլիայի բարեկամութիւնից։ Երկրորդ՝ Անգլիան չատ կը ցանկանար, որ Ռուսաստանը խաղաղ Ովկիանոսի վրա որ և է չը սառչող նաւահանգիստ ձեռք բերէր, որովհետև դրանից կը շահվի միայն անգլիական վաճառականութիւնը։ Երրորդ՝ ամբողջ աշխարհի խաղաղութեան համար անհրաժեշտ է, որ անգլո-ամէրիկական մի դաշնակցութիւն ստեղծվի։

—

Կ. Պոլսից հաղորդում են, որ աւստրո-ունգարական դեսպանութեան թարգմանը յանձնել է Բ. Դրան մի ցուցակ, որի մէջ առաջ են բերված թիւրքերի ձեռքով սպանված բոլոր հայերի անունները։

—

Լօնդոնից հեռագրում են յունվարի 31-ից, որ լօրդերի պալատը ընդունեց դահական ճառի պատասխանը։ Հայաստանի վերաբերմամբ Սօլսբիւրին նորից պնդեց, թէ Անգլիան որ և է դաշնագրութեամբ ոչ մի խոստում չէ արել՝ սուլթանին պատերազմ յայտնելու մասին այն դէպքում, երբ նա իր երկիրը աւելի լաւ չը կառավարի։ Ճառախօսը յայտնեց, որ նա երբէք պատերազմի սպառնալիք չէ արել սուլթանին, այլ միայն ցոյց է տուել նրան՝ վատ կառավարութեան ծանր հետևանքները։ Այդ նախազգուշացումները մինչև այժմ էլ մնում են իրանց զօրութեան մէջ։ Եթէ սուլթանը կարհամարհի Եւրօպայի ցուցմունքները, այն ժամանակ այն աղէտը, որը Եւրօպան աշխատում է որքան կարելի է յետաձգել, կը դառնայ անխուսափելի։ Միւս պետութիւնների հետ ունեցած գրագրութիւնը ցոյց է տալիս, որ այդ պետութիւններն էլ մտադիր չեն խրախուսել՝ Հայաստանը զօրքով գրաւելու գաղափարը։ Ռուսաստանը վճռական կերպով դէմ է թէ ռուսաց և թէ ուրիշ որ և է գրաւման։ Պետութիւնները կարծում են, որ սուլթանին ժամանակ պէտք է տալ բարեկարգութեան համար, որը հէնց այժմ էլ նկատվում է։

Համայնքների պալատում ուղերձի վերաբերմամբ վիճաբանութիւնները շարունակվում են։

—

«Новости» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, յունվարի 28-ից. «Այստեղի թիւրքաց քաղաքական շրջաններում նկատելի կերպով՝ Անգլիայի հետ մօտենալու ձգտում է նկատվում։ Սուլթանը Վիկտորիա թագուհու նամակին մի ջերմ բարեկամական պատասխան է պատրաստում։»

—

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Վան, յունվարի 10-ին

Աղթամարի կաթողիկոս Խաչատուր Շերօեանց մեռաւ դեկտեմբերի 22-ին։ Նա ծնած էր 1819 թուականին, Ռշտունեաց Բողնիս գիւղին մէջ։ Իր պատանեկութիւնը կանցուցէ Նարեկայ և Աղթամարի վանքերուն մէջ և ձեռք կը բերէ այն ուսումը, որ բաւական էր այդ միջոցներ՝ տիրացու կոչուելու համար։ Այնուհետև Էջմիածին կերթայ ուսումը կատարելագործելու՝ որչափ բաղտ մը փնտռելու նպատակաւ։ Աշտարակեցի Ներսէս Հայրապետի միջոցն էր։ Հոն իբրև փոքրաւոր կաշակերտի խաթունեան (?) եպիսկոպոսին քով։ Իր՝ չը գիտենք ինչ ձիրքերուն համար՝ խաչատուր շատ սիրելի կը լինի այս սրբազանին, այնպէս որ ոչ միայն վարդապետ կը ձեռնադրուի անկէ, այլ և —կըսեն—անոր մեռնելէն վերջ կը յաջողի իւրացնել անոր թողած 8000 ոսկւոյ չափ գումարը։ Այս հարստութեամբ զինեալ կը դառնայ Աղթամար։

Շնորհիւ մէկ կողմէ այս հարստութեան, միւս կողմէ իր բնածին ուշիմութեան և խորագիտութեան, ինչպէս նաև այն մտաւոր պաշարին, որ թէպէտ ըստ ինքեան շատ աղքատ էր, բայց նայելով այն ժամանակին և միջավայրին՝ գերազանց արժանաւորութիւն մը կուտար իրեն, չինականի այդ զաւակը—խաչատուր վարդապետ—կը յաջողի ձեռք բերել այնչափ մեծ հեղինակութիւն Աղթամարի միաբանութեան մէջ և դուրսը, որ իր ձայնը գերակշիռ կը լինի վանական ամեն գործերու մասին, և կը յաջողի 1864 թուին կաթողիկոս ընտրուել այն իսկ միջոցին՝ երբ քիւրտի մը գնտակ վերջ կուտար Բիւլբիւլ Պետրոսի կեանքին։ Խաչատուր կամբասանուի իբրև մեղսակից իր նախորդ Պետրոս կաթողիկոսի սպանութեան գործին։ Դատի կը քաշուի ի Կ. Պոլիս, ուր կը թափառի իբր 12 տարի և հազարներով ոսկիներ կը ծախսէ՝ մինչև որ կը յաջողի արդարացած ետ դառնալ։

Երեսուն և մէկ տարի վարեց կաթողիկոսական պաշտօն. բայց ինչ հայեացքներ, ինչ ըմբռնում կրնար ունենալ իր կոչման և պաշտօնի պարտականութեանց մասին մի այնպիսի անձ, որոյ ստացած կրթութիւնը տիրացուական և փոքրաւորական էր, և զուրկ էր այն ձիրքերէն, որք երբեմն մարդս իր միջավայրէն շատ վեր կը բարձրացնեն։— Գործունեայ և խորագէտ, բայց ագահ և փառամոլ, սառնասիրտ և անուսումնասէր, ահա իր որոշիչ յատկութիւններ՝ որոց մասին բնաւ առարկութիւն մը չը կրնար լինել և զորս հաստատելու համար բազմաթիւ անեկդոտներ և իրական անցքեր կը պատմուին։ Կարգ մը ուրիշ բարոյական խոշոր պակասութիւններ ալ կը վերագրուին իրեն, բայց մեզ համար դժուար է այդ մասին որոշ կարծիք մը յայտնել։

Հանգուցեալը ստացած էր օսմանեան կառավարութենէն Ա. Մէջիդիէ և Ա. Օսմանիէ պատուանշաններ՝ անշուշտ իբրև վարձատրութիւն իր հաւատարիմ ծառայութեանց։

Նա շինած է Աղթամարի մէջ վեհարան մը, դպրոց մը (երկու սենեկէ բաղկացեալ մի շէնք), ջրաղաց մը, ախոռներ և յարդանոց, ինչպէս նաև իր թեմերուն մէջ մի քանի գիւղական եկեղեցիներ, նորոգած է մի քանի թեմական վանքեր. աւելցուցած է Աղթամարի եկեղեցական սպասներ և զգեստեղէններ (կըսեն թէ այս մասին իր ըրած յաւելումները մինչև 1000 ոսկի կը գնահատուին)։

Բայց մի հարցնէք, թէ այդչափ երկարամեայ պաշտօնավարութեան միջոցին թեմականաց հոգեւոր մատակարարութեան կամ բարոյական ու մտաւոր պահանջները գոհացնելու համար՝ ինչ միջոցներ ի գործ դրուած են։—Բացարձակապէս երբէք։ Վարժապետ անունով պարկեշտ (!) երիտասարդ մը գտնուած է միշտ Աղթամարի մէջ, ոչ այնչափ իբրև ուսուցիչ, որչափ իբրև դրագիր կաթողիկոսին ծառայելու պաշտօնով, իրաւ է նայնպէս, որ երբեմն մի քանի հատ պատանիներ ժողովուած են թեմական գիւղերէն՝ Աղթամարի մէջ երբեմն իբրև փոխասաց, երբեմն իբրև խօտաղ ծառայելու համար, բայց դպրոց իսկապէս երբէք եղած չէ հանգուցեալ վեհափառին օրով, ոչ Աղթամարի և ոչ անոր թեմերուն մէջ։

Աղթամարի թեմերը,—Հայոց ձոր, Գաւալ, Շատախ, Մոկս, Մամրշանք, Խիզան, Կարկառ, Կարճկան, Սպարկերտ,—ամենքն ալ դեռ 15 տարի առաջ չէն և հայաչատ գաւառներ էին. եթէ Աղթամարը ժամանակին պարտաճանաչ լինէր անոնց վերաբերութեամբ, թերևս անոնցմէ շատեր այժմ ամայացած և օտարաբնակ դարձած չը պիտի լինէին...

Այս թեմերու մէջ գտնուած բազմաթիւ աւերակ կամ անմարդաբնակ վանքերէն զատ՝ կան դեռ շատ բնակելիներ ալ. ինչպէս են Հայոց ձորոյ մէջ՝ Կռնկու, Սրխու, Խէքայ, Էրէմերու, Զարեան, Ս. Նշան և Սպիտակ վանքեր. ի Գաւառ՝ Նարեկայ, Կարմրակայ, Նոր Գեղի և Թոմայ վանքեր. ի Խիզան՝ Ուրանց, Ս. Խաչ, Բարիձոր և Բաղէնից վանքեր. ի Սպարկերտ՝ Շիրինից Գաւառակ, Քամաղիէլի վանքեր. ի Կարկառ՝ Խնձորուտ և Ձկոր. ի Մոկս՝ Փութկի Ս. Գէորգ և Ամենափրկիչ. ի Շատախ՝ Կարատէր. ի Մամրշանք՝ Ապարանից Ս. Խաչ։ Ինչու արդեօք այս վանքերէն և ոչ մին դպրոց չէ ունեցած, այլ վանքապատկան կալուածներու արդիւնքը ծառայած են միայն վանահայր մը և իւրայիններ կերակրելու և հաղիւ վանքի տուրքեր և պարքեր վճարելու։ Միաբանութիւն ալ մի փնտռէք ոչ իսկ Աղթամարի մէջ։ Մինթէ կարելի է միաբանութիւն անուանել Աղթամարի մէջ այժմ գըտնուած 10-ի չափ տիրացուներ, 10 հատ մ'ալ վարդապետներ, այդ ծայլ, տգէտ, կոպիտ, պորտաբոյծ և դեռ ինչ կուզէք ըսէք... արարածներ։

Խաչատուր կաթողիկոսի թողած հարստութենէն երևան եկաւ միայն 1800 ոսկւոյ գումար մը հնչուն դրամ, 1000 ոսկւոյ չափ ալ մուրհակաւոր առնելիք։ Այս առնելիքներ գանձելու յոյս չը կայ, կըսեն. իսկ պատրաստի 800 ոսկին յանձնարարուած է տալ կարգ մը անձերու, որոց տալիքներ ունի եղեր։ Մնացեալ 1000 ոսկին բերանացի կտակած է Աղթամարի մէջ ժառանգաւորաց վարժարան մը հիմնելու նպատակին։ Կտակակատարներն են տեղւոյս առաջնորդ (պատրիարքական փոխանորդ) Սահակ վարդապետ և Աղթամարի միաբաններէն Արսէն վարդապետ, որ կաթողիկոսական տեղապահ նշանակուած է պատրիարքի հեռագրով։

Հանգուցեալ կաթողիկոսի անձնական հարստութիւնն էր, որ ամենէն աւելի խօսքի նիւթ եղած էր այստեղի հասարակութեան մէջ։ Կըսեն թէ իւրայիններ մեծ-մեծ դումարներ խորած են։ Իբր 12 տարի առաջ իւր սենեկին մէջ կատարուած հանրածանօթ գողութեան մը առթիւ՝ 4000 ոսկւոյ չափ կորուստ մը տուաւ թէկն, բայց ոմանց ասելով՝ դա իւր ունեցածի մի անչնչան մասը միայն կը կազմէր։ Մեզ համար դժուար է այս մասին ստոյգ և որոշ բան մը խօսել։ Այս իրաւ է, որ վանքի եկամուտները (պտղի, հոդեբաժին, ձեռնադրութեան տուրք, նշանառք, մուկաթայ, զիւղարայ, ուխտաւորութեան հաստոյթ, միւռոնաբաշխութեան արդիւնք, ոչխարի, տաւարի և հողերու հաստոյթներ և այլն) բոլորը կաթողիկոսի անմիջական և բացարձակ իրաւասութեան միայն ենթարկուած էին։ Ոչ ոքի յայտնի չէ, թէ ինչ էր եղեմտից ընդհանուր դումարը, վասն զի ոչ տումար կար գրելէ և ոչ հաշուպահութիւն։

Աղթամար չատ հնութիւններ չունի։ 95 տարի առաջ կողոպտված է մոկաց բէկերէն։ Այժմ եղած հնութեանց մէջ կը յիշուին երկու մագաղաթեայ ձեռագիր աւետարաններ, Լուսինեան Լեոն Զ. օրէն մնացած. նաև ուրիշ ձեռագիր մագաղաթ մը, որ կը նկարագրէ հայ թագաւորաց ընտրութեան և օծման եղանակ։ Կը ցաւինք, որ անձամբ տեսած չը լինելով, չենք կրնար մանրամասն գրել։ Լուր կայ թէ շատ հին գրքեր խոնաւութեան և փոշիներու մէջ կը փտին. կը հաւատանք. ով է անոնց արժէքը գնահատելու կարող Աղթամարի մէջ։

Մ—դ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս Բօսնիայի Պոտիչէլէ քաղաքում վախճանվեց մի կին՝ Պէտրոնիա Բիլբիա անունով, որ Բօսնիա-Հէրցէգովինայի գլխաւոր ժողովրդական հերոսուհիներից մինն է համարվում։ 1874—78 թուին նա իր ամուսին Իլիայի հետ կազմակերպեց Բօսնիայի ապստամբութիւնը։ Թիւրքաց կառավարութիւնը շատ աշխատեց բռնել այդ հերոսուհուն, բայց իզուր.—նա ստիպվեց յայտարարել, որ մեծ վարձատրութիւն կը տայ նրան, ով կը բերի Բիլբիայի գլուխը։ Սակայն չը նայելով, որ նշանակված վարձատրութիւնը շատ մեծ էր, բօսնիացիների մէջ չը գտնվեց և ոչ մի հատ դաւաճան, որ մատնէր այդ հերոսուհուն. երկար ժամանակ նա թաքնված էր մի անտառում և բօսնիացիները հայթայթում էին նրա բոլոր պէտքերը։

Բիլբիայի թաղումը, ինչպէս հաղորդում են եւրոպական լրագիրները, կատարվեց մեծ հանդէսով։ Նա մեռաւ 46 տարեկան հասակում։

* * *

Կ. Պոլսի անգլիական դեսպան Սըր Ֆիլիպ Կերրին մի նամակ ուղղելով «Daily News» լրագրի խմբագրին, յայտնում է, թէ սխալ է լրագրերների հրատարակած լուրը այն մասին, որ սուլթանը՝ վատ ընդունեց իրան։ Ընդհակառակը, սուլթանը շատ սիրալիր և քաղաքավարի ընդունելութիւն է ցոյց տուել իրան՝ Կերրին։

* * *

Իշխան Բիսմարկ, իրան յատուկ սրամտութեամբ, շատ լաւ է ընդունել լորդ Սօլսբիւրիին, որը, ինչպէս երևում է, միայն մեծ-մեծ խօսել գիտէ։

«Լորդ Սօլսբիւրիին,—ասաց Բիսմարկ Բերլինի կոնգրեսից յետոյ,—ե ղ ե գ ն է, դրսից ե ր կ ա թ է գոյնով ներկած»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԿԻԵՎ, 5 փետրվարի։ Փետրվարի 4-ին, ցերեկվայ ներկայացումից կէս ժամ յետոյ՝ թատրոնում հրդէհ ծագեց։ Թատրոնը ամբողջովին այրվեց. մարդկային զոհեր չը կան. այրված քաղաքային գոյքը ապահովացրած է 140 հազար բուբլիով։

ՊԱՐԻԶ, 5 փետրվարի։ Ի նկատի ունենալով սենատում կատարված քուէարկութիւնը, որով յանդիմանութիւն է յայտնվում արդարադատութեան մինիստրին, Բուրժուան գնաց Ելիսեան պալատը և բացատրեց Ֆորին գործերի վիճակը։ Նախագահը յայտնեց, որ վաղը պատասխան կը տայ։ Կարելի է, որ կաբինետի կազմութեան մէջ մի քանի փոփոխութիւններ տեղի ունենան. ենթադրվում է որ Ռիկար, գուցէ և Կոմբ մինիստրները հրաժարական տան։

Մինիստրները խորհրդակցելով, եկան այն եզրակացութեան, որ պատգամաւորների ժողովի վերջին քուէարկութիւնը պարտաւորեցնում է նրանց՝ շարունակել այն քաղաքականութիւնը, որ գրաւել է պալատի վստահութիւնը։

ՍՕՖԻԱ, 5 փետրվարի։ Բուխարէստում ապրող հարուստ վաճառական Ե. Գէօրգիէվ նուիրել է փետրվարի 2-ի յիշատակին 800,000 ֆրանկ և 10,000 քառակուսի մէտր գետին Սօֆիայի կենտրոնում, առաջին բուլգարական համալսարանի շինութեան համար։

ՍՕՖԻԱ, 5 փետրվարի։ Գահական ճառի մէջ իշխանը ասում է. «Շնորհակալութիւն յայտնենք նորին վեհափառութիւն սուլթանին, մեր վեհապետին, նրա համար, որ նա բանակցութիւններ սկսեց մեծ պետութիւնների հետ՝ գործերի անորոշ վիճակին վերջ դնելու՝ և Բուլգարիայի այժմեան կազմակերպութիւնը օրինական ճանաչելու համար, բանակցութիւններ, որոնք նպաստաւոր հետևանք են արտաքրել։ Այդ աչող ելքի համար մենք պարտական ենք ամենայն ռուսաց Կայսր Նիկոլայ II ի այն առանձին բարեհաճութեան, որ Նա ունի դէպի Բուլգարիան։ Շնորհակալութիւն Ռուսաց Ցարին՝ մեզ համար թանկագին այդ զգացումների համար, շնորհակալութիւն այն մասին, որ Նա արժանացրեց բուլգարական իշխանական տունը՝ մեր սիրելի որդու, բուլգարական գահաժառանգ Բորիսի մկրտութեան ժամանակ կնքահայր լինելու պատիւն, և բարեհաճեց վերակալել Ռուսաստանի և Բուլգարիայի ընդհանուած դիպլոմատական յարաբերութիւնները։»

ՍՕՖԻԱ, 6 փետրվարի։ Կոմս Գոլէնիշչէվ-Կուտուզով մեկնեց Սօֆիայից Պետերբուրգ։ Նրան ճանապարհ գցեցին մեծ շուքով. ժողովրդի խուռն բազմութիւն էր ներկայ։ Կոմսը կայարան եկաւ իշխանի հետ։ Իշխանը, մինիստրների խորհրդի նախագահը և զինուորական մինիստրը ճանապարհ են գցում կոմսին մինչև Ցարէբրոդ։

ԼՕՆԴՕՆ, 6 փետրվարի։ «Times»-ին հեռագրում են Կօբէից. «Յունվարի 29-ի գիշերը, Զէմունշպօում ափ իջան 200 ռուսաց զինուորներ և դիմեցին դէպի Սէուլ։ Կօրէի թագաւորը ծածուկ փախաւ պալատից և գնաց ռուսաց դեսպանատունը, որտեղից Կօրէական մինիստրներին մասնիչներ հրատարակեց։ Մինիստրներից երկուսը գլխատվեցին, մնացածները փախան։ Կազմված է նոր մինիստրութիւն, որ հակա-եապօնական բնաւորութիւն ունի։ Եապօնիայում դժգոհութիւն է արտայայտվում։ Պարլամենտի նիստը երկարացրված է 10 օրով։ Մինիստրները գուժարվեցին խորհրդակցութեան համար»։

ՊԱՐԻԶ, 6 փետրվարի։ Պահպանողական լրագիրները կարծիք են յայտնում, թէ նախագահ Ֆորը պէտք է պահանջի կաբինէտի հրաժարականը։ «Figaro» ասում է. «Գործերի վիճակը յեղափոխական բնաւորութիւն է ստացել, որովհետև պալատի կամ սենատի արձակումը անխուսափելի է»։

ՍՕՖԻԱ, 6 փետրվարի։ Մտադրութիւն կայ պալատում կառուցանել մի ուղղափառ եկեղեցի։ Պրինց Բորիսը պէտք է առանձին բնակարանում ապրի։ Իբրև դատարակ՝ ենթադրութիւն կայ նշանակել Վասիլիև վարդապետին, որը անցեալ տարի պատգամաւորութեան հետ եկել էր Ռուսաստան։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Փետրվարի 6-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	94	ր.	20 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	45	»	85 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37	»	25 »
Ոսկի — — արժէ . .	7	»	50 »
Մաքսային կուպոններ — . .	149	»	— »
Բօրսային դիսկոնտ — . .	7½	»	— »
4% պետական բէնտա	98	»	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	288	»	— »
— — երկրորդ —	262	»	—
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	218	»	— »
5% պետական երկաթուղ. բէնտա	100	»	—
4% ներքին փոխառութեան . . .	97	»	⅞
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	100	»	25 »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ			
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի	100	»	—
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	—	»	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.			
ընկերութեան օբլիգացիաները.	101½	»	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101⅝	»	— »
Օդեսայի — —	100	»	— »
Թիֆլիսի — —	98¾	»	— »
Թիֆլիսի կալ. բանկի 6% — . .	100	»	50 »
5% — — — . .	99	»	— »
Բուխարայի — 6% . .	100	»	50 »
5% — — — . .	99	»	— »

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՅՏՆՈՒՄ Է

—

ՖՕՐՏ-ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՍԿ. Եգոր Զելաբով։ Օրացոյցներ ուղարկելու համար ձեր 2 բուբլին յանձնեցինք կենտրոնական գրավաճառանոցին։

ԴՈՒԲԱ. Ա.աղ քահ. Ավշարեանց։ Ձեր նամակը չի տպագրվի։ Հերքումը պէտք է տպագրել այն լրագրի մէջ, որի դէմ ուղղած է։ Բարեհաճեցէք յետ ստանալ ձեր 2 բուբլին։

ԹԻՖԼԻՍ. Ա.ՀԸՂ-Զիվանի։ Ձեր երգարանի համար խմբագրատանը ստացված է 2 ր. Ռուսաստանի Զասլավլ քաղաքից։ Բարեհաճեցէք ստանալ և ուղարկել առած հասցէով՝ այդ գիրքը։

ՐՕՍՏՕՎ. Կիւրեղ Սիմոնեան։ Ձեր ուղարկած 20 բուբլին կը յատկացնենք աղքատներին։ Եթէ համաձայն չէք, բարեհաճեցէք յետ ստանալ։ «Մշակի» մէջ ոչ մի հանգանակութիւն չէ բացված, ուստի ձեր նուէրի մասին տալել չենք կարող։

ԲԱԳՈՒ. Ա. Ձեր խնդրած գիրքը ձեռք բերելու որոշ հասցէ՝ մենք չը գիտենք. դիմեցէք գրավաճառներին։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. Վ. Փափ. Ձեր ուղարկած ծրարը յանձնված է, և այդ մասին իր ժամանակին յայտնված «Մշակի» պատասխանների մէջ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՒՄԱՅ

ԳԱԲՈԻ ԸՆՏԱՆԻՔԸ

ՎԷՊ ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

Դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Типографія Главноначальствующаго, Сергѣю Назарьянцу. ԹԻՖԼԻՍՈՒՄ վաճառվում է նաև կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում։ ԲԱԳՈՒՈ ծախվում է Շիրազեանցի գրախանութում։

(№ 64) 1—5

Մամուլի տակից դուրս եկաւ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ-ՈՒԽՏԻ

(շարունակութիւն և վերջ. հատոր գ.)

„ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ“

ՍԱՀԱԿ ՔՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

(№ 16) 1—5

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ

Մ. Գ. ՀԵՋՈՒԲԵԱՆԻ

(Գոլովինսկի պրոսպեկտ, տուն Անանովի, Նոր Թատրոնի դէմ)

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ առաւօտեան 9 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան։ Բժշկում է ատամները, պլոմբ է անում և դնում է արհեստական ատամներ։

(№ 133) 21—30

Ներկայ փետրվարի 5-ից բացվում է

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ

ՁՐԻ ԴԱՍԸՆԹԱՑ

Ձքաւոր աղջիկների համար

(Կրուզենշտերնսկայա փողոց, № 7)

Սօֆիա Խաչատուրեան ԴԷՄԵՆՏԻԵՎԱ

(№ 15) 2—5

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳՈՒՀԻ ԿԱՅՍՐՈՒՀԻ ՄԱՐԻԱ ՖԵՕԴՈՐՈՎՆԱՅԻ հովանաւորութեան ներքոյ գտնվող՝ Ջրերում խեղդվելուց ազատող ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ, պատիւ ունի խնդրել ընկերութեան Թիֆլիսի շրջանի պ.պ. անդամներից շնորհ բերել, կիրակի, փետրվարի 18-ին, ցերեկվայ ժամը 12-ին, շրջանի ընդհանուր ժողովին, որ կայանալու է Էմմանուէլեանցա Ուպրավայի շինութեան մէջ, Բարօնսկի և Բազարնայա փողոցների անկիւնում, տուն Թամամշեանի, № 16, լսելու և հաստատելու 1895 թվի հաշիւը և 1896 թվի նախահաշիւը։

(№ 15) 2—3

ԱՌԱՋԻՆ ԿԱՆՈՆԱՒՈՐ

ՀՈՄԷՈՊԱԹԻԿԱԿԱՆ ԴԵՂԱՏՈՒՆ

Բացված է պատշաճաւոր թոյլտուութեամբ, 1896 թվի, յունվարի 27-ից ԹԻՖԼԻՍՈՒՄ, Գոլովինսկի պրոսպեկտի և Կրուզենշտերնի փողոցների անկիւնում, տուն Դոբրժանսկու, № 18/1։

Պրէյս-կուրանտի համառօտութիւնը, ըստ պահանջին, ուղարկվում է ԶՐԻ։

ՀԱՍՑԷՆ՝ Նամակների համար՝ Гомеопатическая аптека, Тифлисъ, Головинскій проспектъ, д. Добржанскаго, № 18/1. Հեռագրերի համար՝ Тифлисъ, Гомеопатическая аптека.

(№ 14) 3—3

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1896 Թ.

„ՇԱՒԻՂ“

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

(ԵՐԿՐՈՐԴ տարի)

Հրատարակվում է թէհրանում „Շավիղի“ բաժանորդագրին է մէկ թուման, կէս տարվանը վեց դրան։ Արտասահմանում՝ 3 բուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարվանը 2 ր. կամ 4 ֆրանկ։

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Баку, Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետևեալ հասցէով. Téhéran, Rédaction „SCHAVIGH“.

3—3

ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Լուսանկար Տէր-Ղևոնդեանի մօտ վաճառվում են հետևեալ հայ գործիչների պատկերները՝

Հոգևորականներ.—հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ և ՄԵՍՐՈՊԻ։ Ժամանակակիցներից՝ ՆԵՐՍԷՍ V, ԳԷՈՐԳ IV, ՄԱԿԱՐ և ՄԿՐՏԻՉ կաթողիկոսների, ԳՐԻԳՈՐԻՍ ԱԼԷԱԹՃԵԱՆԻ (կաթողիկոս Կիլիկիայի), ՄԱՏԹԷՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ, ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ և ուրիշ արժանաւոր հոգևորականների։

Նոյն տեղը վաճառվում են.—ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ, ՐԱՖՖԻ, ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ, ԾԵՐԵՆՑԻ, ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ, Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Գ. ԱԴԱՄԵԱՆԻ (բոլոր դերերում նկարված), ԹՄԲԱԳԻՐՆԵՐԻ, կենդանի ԳՐՈՂՆԵՐԻ, նշանաւոր հայ ԿԱՆԱՆՑ՝ Ս. ՏԻՍԱԲԻ, ՄԱՐԻԱՄ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ-ԱՐԾՐՈՒՆՈՒ, «ՄՇԱԿԻ» ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ յօբելեանական ալբոմը, նմանապէս ուրիշ զանազան գործիչների լուսանկարները։

Վերոյիշեալ պատկերները արժեն՝ մեծագիր 3 բուբլի, ՄԻԶԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ 1 բուբլի, ԿԱԲԻՆԷՏԱՅԻՆ կոչված պատկերները՝ 40 կոպէկ, ՎԻԶԻՏ կոչված պատկերները՝ 20 կոպէկ։

Հասցէն՝ ТИФЛИСЪ. Фотографія Теръ-Гевондянца (На Михайловск. мосту). Ճանապարհածախսը գնողի վրա է։

(№ 117) 9—10



ՄԻԶՈՑ ԽԱՐԻՈՒԽԻ ԴԷՄ

բժշկական դեպարտամենտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

Ծախվում է 40 կոպէկով

Դեղադրական Ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ՝ Թիֆլիսում։

(№ 22) 28—30

1895 թ. Նոյեմբերի 10-ից ստացվել է ՊԱՍՏԵՈՐԻ ՍԻՍՏԵՄՈՎ պատրաստած

ԲՐՈՒՍԱՅԻ ԲՕԺՕԺԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ

որ արդէն անցեալ տարիներից յայտնի է Կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով, և տուած առատ բերքով, „ԷԿՕՆՕՄԻԴԷՍ“ ֆիրմայից։

Ցանկացողները կարող են պահանջել Թիֆլիսի Շերամապահութեան կայարանում՝ քննելուց յետոյ։

Գնել ցանկացողները կարող են դիմել՝ ԲԱԹՈՒՄ, ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, եղբ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑՆԵՐԻՆ, իսկ ՆՈԽԻ՝ Աղա Մուսայ Մահմեդովին։

Այս հասցէով Брат. МНАЦАКАНЯНЦЪ, БАТУМЪ կամ ТИФЛИСЪ կամ БАКУ.

(№ 138) (Ե. չ.) 21—24

ԿԱԿԱՕ ԲԼՕԿԼԻՐ

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻԶՔ, արկղիկներում, 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամ։ (GRAND PRIX) Բարձրագոյն պարգև։ Անտվերպէնի 1894 թվի համաշխարհային ցուցահանդիսում։

Գլխաւոր պահեստը՝ դեղարարական ապրանքների Բարձրագոյն հաստատված Կովկասեան Ընկերութիւնը Թիֆլիսում։

(№ 6) (Ե) 4—50

Дозволено цензурою, Тифлисъ, 7 Февраля 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. кав.